Տ. ՆԵՐՍԵՍ ՔԱՀԱՆԱ ԱՍՐՅԱՆ
Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի
հրապարակչական բաժնի տնօրեն,
Ստեփանակերտի Ս. Աստվածամոր Հովանի
մայր եկեղեցու հոգևոր հովիվ
Ռաֆֆի 7, Շուշի, Արցախի Հանրապետություն
էլ. հասցե՝ monk-deacon@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021, գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

1920 Թ. ՇՈՒՇԻԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հայ առաքելական եկեղեցու պատմությունն ամբողջովին համահունչ է հայ ժողովրդի պատմությանը: Եվ հայ ժողովրդի կյանքում արձանագրված պատմական կարևորագույն իրադարձություններն իրենց ուղղակի դրսևորումներն են ունեցել նաև Հայ եկեղեցու իրականության մեջ: Բնականաբար, բացառություն չէ նաև հայ ժողովրդի ամենամռայլ էջերից մեկը՝ 1920թ. մարտին Ադրբեջանի կողմից իրականացված՝ Շուշիի հայ բնակչության ցեղասպանությունը, որի հետևանքով ծանրագույն կորուստներ ունեցավ նաև Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը:

Կոտորածից օրեր անց մամուլում լուրեր հայտնվեցին այն մասին, որ դաժանաբար սպանվել են նաև Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը[1] և Շուշիի քահանաները[2]: Ապրիլի 16-ին Հայաստանի արտաքին գործերի նախարարին ուղղված իր զեկույցում Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը, Շուշիի կոտորածի վերաբերյալ տեղեկություններ հայտնելիս, մեջբերումներ է կատարում իր տրամադրության տակ հայտնված մի քանի նամակներից, որոնց հեղինակները ոճրագոր-

[1] Ծնվել է 1845 թ. Մեղրիում: Ուսանել է Գևորգյան ճեմարանում: Կնոջ մահվանից հետո մտել է վանք և 1887 թ. ապրիլի 21-ին ձեռնադրվել աբեղա: Նույն թվականի հուլիսի 16-ին ստացել է վարդապետական պատիվ և նշանակվել Արցախի թեմի Նուխիի առաջնորդական փոխանորդ՝ դառնալով նաև Ս. Էջմիածնի սինոդի անդամ: 1913 թ. փետրվարի 27-ին նշանակվել է Տաթևի վանքի վանահայր: 1916 թ. ապրիլի 30-ին նշանակվել է Արցախի թեմի կառավարիչ: 1917 թ. ապրիլի 16-ին օծվել է եպիսկոպոս: Սպանվել է 1920 թ. մարտի 23-ին:
[2] Տես «Նոր աշխատավոր» 1920. «Մշակ» 1920:

ծության անմիջական մասնակից թուրքեր էին: Նամակներից մեկում մասնավորապես ասվում է. «Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցին, մինչև անգամ ավետարանը, խալիֆին (եպիսկոպոսին), բոլոր մեծամեծ մարդկանց.... Նշանավոր հայերին գլուխները կտրած բազարներում պտտեցնել էին տալիս սպանելուց հետո»[1]:

Շուշիի կոտորածի և եկեղեցականների կորուստների լուրերի իսկությունը հաստատում է նաև Գանձակի առաջնորդական փոխանորդ Լևոն վարդապետ Պերյանը՝ ապրիլի 21-ին հոգևորականներից մեկին ուղղված իր նամակում և հավելում. «Այստեղ երկար ժամանակ անհաւատ մնացինք այս տեղեկութիւնների հանդէպ, որոնք աւելի և աւելի յամառում են, համարելով դրանք պռովօկացիա՝ Գանձակի շրջակայքի հայ գիւղերի զինաթափութիւնը դիւրացնելու և հայ ժողովուրդը խեղճացնելու նպատակով: Անձնապէս ինքս դեռևս չեմ ուզում հաւատալ, մինչև իսկ մի ռուս պաշտօնեայ ինձ յանձնեց մի բանալի, ըստ երևույթին եկեղեցու, որը նա գտել է Հայոց մասում և տեսել մի հայ քահանայի դիակ՝ ի շարս այլ սպանուածների»[2]:

Շրջանառվող լուրերը խոր տագնապ են պատճառում Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսին: Վեհափառ հայրապետի հրահանգով հայրապետական դիվանը ապրիլի 17-ին նամակով դիմում է Վրաստանի թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսին. «Նկատի ունենալով, որ Դուք ըստ ամենայնի հնարաւորութիւն կունենաք այդ տխուր լուրը ստուգելու՝ Նորին Սրբութիւնը հրամայեց դիւանիս գրել Գերապատուութեանդ ստուգելու ինչպէս այս, նոյնպէս և Շուշի քաղաքի կոտորածների լուրերը և իսկութիւնը, ամենայն մանրամասնութեամբ հաղորդել դիւանիս՝ զեկուցանելու Նորին Սրբութեանը»[3]:

Պատասխան նամակում Մխիթար Սրբազանը հայտնում է. «....ցաւ ի սիրտ՝ ամենախոնարհաբար զեկուցում եմ Ձերդ սրբութեան, որ .... թուրքերը, վերցնելով Շուշին, աւերել և ոչնչացրել են քաղաքի հայկական մասը, կոտորելով առանց սեռի և հասակի խտրութեան մօտ 5000 հայ[4], որոնց թւում թեմական առաջնորդ տ. Վահան սրբազան եպիսկոպոսին, որի գլուխը կտրելով բարբարոսաբար շրջեցրել են քաղաքում ի տես գազանացած խուժանի: Սպանուած են և բոլոր քահանաները, բացառութեամբ տ. Գաբրիէլ[5] քահանայ տ. Յովհաննիսեանի, որը, բանտից փախչելով, մահուանից ազատուել է»[6]:

Արցախի թեմական առաջնորդի և թեմի հոգևորական ու աշխարհիկ ծառա-

---

[1] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ. 2003, 459:
[2] Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան 2001, 744-745:
[3] Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան 2001, 744:
[4] Զոհերի թվի հարցն անշուշտ փոքր-ինչ դուրս է մեր համեստ ուսումնասիրության շրջանակներից, այդուհանդերձ, հաշվի առնելով, որ այն շոշափվում է մեջբերման մեջ, հարկ ենք համարում նշել, որ այդ առնչությամբ տարբեր տվյալներ են նշվում: Օրինակ՝ Հ. Աբրահամյանը հղում է կատարում արխիվային մի վավերագրի (որի տակ ստորագրել էր ՀՀ բանակի գլխավոր շտաբի պետ գնդապետ Վեքիլովը), որտեղ ասված է, որ մարտի 22-ին Շուշիում սպանվել է 8000 մարդ (Աբրահամյան 2003, 317): Իսկ ողբերգական իրադարձություններից շուրջ 6 տարի անց Շուշի այցելած Մ. Շահինյանը գրում է. «1920 թվականի մարտին այստեղ երեք օրում ավերել ու կրակի են մատնել 7000 տուն ու մորթել են՝ ոմանք ասում են 3-4 հազար հայ, ոմանք՝ 12 հազարից ավելի: Փաստ է, որ 35 հազար հայերից Շուշիում ոչ ոք չէր մնացել» (Шагинян 1931, с. 362):
[5] Հրատարակչական վրիպակ է, պետք է լինի Գարեգին (Հմմտ. ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, թթ. 15-16):
[6] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան 2001, 749:

յողների սպանության, ինչպես նաև թեմի կրած նյութական կորուստների և այլ արհավիրքների մասին առավել ընդարձակ պատկերացում ենք կազմում թեմի կոնսիստորիայի[1] անդամ Կարապետ քահանա Վարդապետյանցի և ատենադպիր Միրզա Տեր-Սարգսյանի՝ մայիսի 15-ին Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված զեկույցից. «Վահան եպիսկոպոսը սպանուեց առաջնորդարանում, չկամենալով դուրս գալ: Վահան եպիսկոպոսի սպանութեան մասին մեզանից յետոյ դուրս եկած հայ ոստիկանապետ Աւետիք Տէր-Ղուկասեանը պատմում է, որ նոյն օրը երեկոյեան ժամը 10-ին ինքը կարողացել է մտնել Սրբազանի մօտ և յայտնել, թե այլևս հնար չկայ մնալու, պետք է կամ փախչել, կամ մի կերպ ընկնել Սուլթանովի մօտ: Սրբազանը պատասխանել է, թե առաջնորդարան և կոնսիստորիա չեմ թողնիլ և չդուրս գալ, և .... յամառում է ու նստում»: Կես ժամ չանցած բարբարոսները ներխուժում են առաջնորդարան և դաժանորեն սպանում Վահան սրբազանին և առաջնորդարանում գտնվող թեմական ծառայողներին ու նրանց ընտանիքներին: Ինքը՝ Ավետիք Տեր-Ղուկասյանը, կարողանում է արդեն հրդեհված առաջնորդարանի պատուհաններից մեկից ցած նետվել ու մի կերպ մազապուրծ փախչել:

Զեկույցի հեղինակները հայտնում են, որ կոտորածներին զոհ են գնացել նաև թեմական վարչության գրեթե բոլոր անդամները. «Կոնսիստորայի կողմից սպանուած են՝ անդամ Խորէն ա. քահ. Իսկանդարեանը, կարգապահ Անանիա Տէր-Դանիէլյանը և դիւանապահ Յովհաննէս Ղարաբէկեանը: Քահանաներից սպանուած է Յարութիւն ա. քահ. Վարդապետեանը, իսկ Գարեգին ա. Քահ. Յովհաննիսեանը ազատուել է բանտից կիսամեռ դրութեան մէջ և միանգամայն մերկ. սպանուած են թեմ. դպրոցի տեսուչ Աղ. Ծատուրեանը, ուսուցիչ Գաբրիէլ Ղուլիքևխայեանը, հոգաբարձու Անդրեաս բէկ Տէր-Յարութիւնեանը, Ղուկասեան ուսումնարանի տեսուչ բժ. Նիկողայոս Եարամիշեանը և այլն: Այսպէս ահա չկայ հոգևոր վարչութիւն, և մնացել ենք մի անդամ ու մի ատենադպիր, մերկ ու քաղցած, կոչուած է ժամանակաւոր մարմին գործերը վարելու»[2]:

Քահանաներից մեկի սպանության մանրամասները նկարագրում է Զարեհ Մելիք-Շահնազարյանը՝ մեջբերելով կոտորածների դժոխքով անցած Տաթևիկ Տեր-Սահակյանցի հուշերը: Վերջինս, ներկայացնելով գերեվարված հայերի նկատմամբ իրագործված ոճիրները, իր խոսքի շարունակության մեջ պատմում է. «Այնուհետև սկսում են հաշվեհարդար տեսնել գերի տղամարդկանց և պատանիների հետ, որոնց նախօրոք կապկպել էին: Նրանց հերթով բերում էին կաշվե գոգնոցով դահճի մոտ, որը, սուր դանակը ձեռքին, նստած էր աթոռին: Առաջինը նրա մոտ բերեցին գեղեցկահասակ, երկարամորուք քահանա Տեր Հարությունին: Նրա ձեռքերը կապված էին թիկունքին, ոտքերը՝ շղթայված: Դահիճը նրան գցում է մեջքի վրա, գլուխը դնում ծնկանը, հետո բռնում մորուքը և ցուցադրաբար սուր դանակով կտրում գլուխը: Հետո թուրքերը քահանայի գլուխը ցից են հանում և տանում քաղաքի թաթարական թաղամասի փողոցներով պտտեցնում»[3]:

Հսկայական էին նաև Արցախի թեմի կրած նյութական կորուստները: Կարա-

---

[1] Թեմական հոգևոր մարմին՝ վարչական և դատական գործառույթներով:
[2] Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան 2001, 747-748:
[3] Мелик-Шахназаров 1995, ст. 43-44:

պետ քահանա Վարդապետյանցի և ատենադպիր Միրզա Տեր-Սարգսյանի վերոնշյալ զեկույցում ամփոփ կերպով ծանուցվում է. «Առաջնորդարանը, թեմական դպրոցը, եկեղեցիները թալանուած են, ապա այրուած: Կռիւը սկսելով առաւօտեան ժամը 5-ին՝ հնարաւորութիւն չի եղել կոնսիստորիայից ոչ մի դոկումենտ, ոչ մի գործ ու գանձ ազատել, նոյնպէս և եկեղեցիներից»[1]: Լիարժեք գնահատել հասցված վնասը պարզապես անհնար է: Ամբողջ գույքը, եկեղեցական պարագաները, արվեստի գործերը, գիրք-գրականությունը, փաստաթղթերը և այլնը, կողոպտվել կամ ոչնչացվել են: Սակայն թեկուզ միայն այն փաստը, որ Շուշին 1830-ականներից ի վեր Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի հոգևոր կենտրոնն էր[2], և այնտեղ բնականաբար կենտրոնացված էր վերոնշյալ արժեքների մի զգալի մասը, որոշակիորեն հուշում է, որ կորուստների չափերն իրոք բավականին մեծ են եղել: Մեծագույն կորուստներից մեկը թերևս կարելի է համարել Արցախի թեմի արխիվի ոչնչացումը:

Ողբերգական այս իրադարձությունների հետևանքով Հայ եկեղեցու կրած կորուստների շարքում արձանագրվեց նաև ևս մեկ առանձնահատուկ ցավալի փաստ: Կուսանոցները Հայ առաքելական եկեղեցում հազվադեպ երևույթներ են: 1816 թվականից Շուշիում գործում էր Կուսանաց անապատը, որը Նոր Ջուղայի Ս. Կատարինե և Թիֆլիսի Ս. Ստեփանոս վանքերի հետ միասին պահպանում էր Հայ եկեղեցու կանանց մենաստանների մոռացված ավանդույթները: Իրականացված ոճրագործությունների հետևանքով վերջ դրվեց նաև բացառիկ այս երևույթի գոյությանը[3]:

Այսպիսով՝ ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք փաստել, որ 1920 թ. Շուշիի ցեղասպանության հետևանքով Արցախի թեմն ուղղակի գլխատվեց, ինչպես բառացիորեն (թեմական առաջնորդի և հոգևոր իշխանության ներկայացուցիչների օրինակով), այնպես էլ ավելի լայն, փոխաբերական իմաստով: Շուշիի անկումը փաստացիորեն նաև Արցախի թեմի հոգևոր կենտրոնի ոչնչացումն էր:

Արցախի թեմի անդառնալի կորուստներն իրենց ծանրագույն հետևանքներն ունեցան թեմի հետագա ճակատագրի վրա: Հենց միայն թեմի առաջնորդի սպանությունը մեծ հարված էր Արցախին ու նրա թեմին: Բարդագույն ժամանակահատվածում՝ 1916-1920 թթ., թեմի հոգևոր տեսչությունն ստանձնած Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը, զուտ հոգևոր առաջնորդի իր կարգավիճակից բխող կարևորությունից զատ, իր անձնական բարձր հատկանիշների և անսահման հայրենասիրության շնորհիվ մեծ հեղինակություն էր ոչ միայն եկեղեցական ասպարեզում, այլ նաև արցախահայության հասարակական-քաղաքական կյանքում: Լինելով Արցախը Մայր Հայաստանին միավորելու ամենաջերմեռանդ ջատագովներից մեկը՝ Սրբազանը կարևորագույն տարբեր գործընթացներում գործուն ներկայություն և առանցքային դերակատարում ուներ. բանակցում էր Ադրբեջանի կառավարության և անգլիական միսիայի հրամանատարության հետ՝ փորձելով ապահովել իր հոգևոր հոտի անվտանգությունը, մասնակցում էր արցախահա-

[1] Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան 2001, 747:
[2] Տես Բալայան 2007, 70-78:
[3] Տես Մկրտչյան 2014, 204-213:

յության համագումարներին, ինքնապաշտպանական գործողությունների կազմակերպմանը, փորձում էր հարթել ներքաղաքական կյանքում առկա տարաձայնություններն ու պահպանել արցախահայության միասնականությունը և այլն[1]: Իսկ զուտ հոգևորականի նրա կերպարը ժամանակակիցները բացառապես մեծագույն դրվատանքով են բնորոշում. «եկեղեցասեր, դպրոցասեր, անաչառ և շիտակ պաշտոնյա եկեղեցու և իր առաջնորդական կառավարության», «վերին աստիճանի մաքրության և բարոյականության» տեր և այլն[2]: Իսկ ժամանակակիցներից Եղիշե Իշխանյանը հետագայում գրում է. «Շատ համեստ մարդ էր Վահան Սրբազանը և յարգւած ժողովրդի կողմից», «բարի, անբասիր վարքի տէր և եկեղեցուն նւիրւած մարդ»[3]: Եվ, ըստ էության, ավետարանական քաջ հովվի իր նկարագիրը Վահան Սրբազանը պսակեց մարտիրոսական վախճանով՝ հրաժարվելով փախուստի կամ առավել ևս դահիճ Սուլթանովի ողորմածությանն ապավինելու միջոցով սեփական կյանքը փրկելու որևէ փորձից:

Նման արժանավոր առաջնորդից ու նրա կազմած թեմական վարչությունից զրկվելով՝ Արցախի գլխատված թեմն անկարող գտնվեց որևէ կերպ դիմադրելու Ադրբեջանի հակահայկական ու հակաեկեղեցական քաղաքականությանը: Նշյալ իրադարձություններից շուրջ մեկ ամիս անց՝ ապրիլի 28-ին, Ադրբեջանը խորհրդայնացվեց, իսկ մուսավաթական պարագլուխները մի ակնթարթում վերածվեցին բոլշևիկ հեղափոխականների: Սակայն այս «գունափոխությունը» որևէ կերպ չփոխեց Ադրբեջանի հակահայկական զավթողական քաղաքականությունը: Ավելին, այն, ինչ որ նախորդ տարիներին Ադրբեջանին չհաջողվեց իրականացնել Թուրքիայի և արևմտյան երկրների (մասնավորապես անգլիացիների) ամենալայն աջակցության պայմաններում, ի կատար ածվեց Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ. Արցախը բռնակցվեց Ադրբեջանին: Արցախի բռնայուրացման հարցերի վերջնական լուծման համապատկերում Ադրբեջանի համար պակաս կարևոր չէր նաև իր զավթողական ծրագրերի համար իրական վտանգ ներկայացնող անձանց ու հաստատությունների չեզոքացումն ու ոչնչացումը: Ուստի բնական է, որ ադրբեջանական իշխանութիւնների համար իրենց ազդեցութեան ոլորտից դուրս՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից կառավարվող և ազգային-ազատագրական պայքարի օջախ լինելու փառապանծ ավանդույթներ ունեցող Արցախի թեմն առաջնահերթ թիրախ էր դիտարկվում: Իսկ Խորհրդային միության որդեգրած հակակրոնական ու հակաեկեղեցական դաժան պայքարն ուղղակի անսահմանափակ դաշտ էր բացում Արցախի թեմի նկատմամբ Ադրբեջանի սանձարձակ քաղաքականութեան համար: Վահան սրբազանի սպանությունից հետո երկու տարի շարունակ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը չէր կարողանում Արցախում թեմակալ առաջնորդ նշանակել: Այդ երկու տարիների ընթացքում ադրբեջանական իշխանություններին հաջողվեց գրեթե կազմալուծել Արցախի թեմը. արդեն 1922 թ. թեմի մեջ մտնող 159 բնակա-

[1] Տես Աբրահամյան 2009, 165-199:
[2] Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան 2001, 626:
[3] Իշխանյան 1999, 140, 656: Հերթական անգամ հիշելով Վահան Սրբազանին՝ Ե. Իշխանյանը խոր կսկիծով գրում է. «....կրկին ու կրկին յիշեցի Ղարաբաղի անփառունակ ապստամբութիւնը, որի հետևանքը եղաւ Շուշու հայկական մասի ծայրէիծայր հրդեհի ճարակ դառնալը ու հիմնայատակ կործանւելը և կրկին պատկերացրի, թէ ինչպէս է նահատակւել այն բարի ծերունին, այրւելով հրդեհւած հինաւուրց առաջնորդարանի շէնքում, որտեղ իր կացարանն էր» (Իշխանյան 1999, 657):

Գևորգ Ե Սուրենյանց

վայրերից 27-ը չունէին եկեղեցի, քահանաներ ունեին միայն 39-ը[1]: Համեմատության համար նշենք, որ 1914 թ. տեղեկագրի համաձայն՝ Արցախի թեմն ուներ 222 գործող եկեղեցի և 188 քահանա[2]: Վիճակագրական այս թվերը կտրուկ նվազեցին հատկապես 1920 թ. սկսած:

1922 թ. մարտի 27-ին Գէորգ Ե Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ Անանիա արքեպիսկոպոս Համազասպյանը նշանակվեց Արցախի թեմի առաջնորդ: Դժոխային պայմաններում երկու տարվա պաշտոնավարումից հետո յոթանասունամյա առաջնորդը ստիպված եղավ 1924 թ. մայիսի 27-ին հրաժարական ներկայացնել: 1925 թ. Գէորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Վրթանէս ծայրագոյն վարդապետ (1928-ից՝ եպիսկոպոս) Հակոբյանը նշանակվում է Արցախի թեմի առաջնորդ: Չնայած Մայր Աթոռի և Արցախի թեմի առաջնորդի գործադրած հերոսական բոլոր ջանքերին՝ Ադրբեջանի իշխանությունների բռնությունները հասան իրենց գագաթնակետին՝ հանգուցալուծվելով 1933 թ. Արցախի թեմի վերջնական փակումով[3]: Հետագա տարիներին Արցախում հոգևոր-եկեղեցական կյանքի վերականգնման բոլոր ջանքերը կտրականապես կասեցվեցին Ադրբեջանի կողմից՝ ընդհուպ մինչև 1980-ականների վերջ Արցախը վերածելով Հայ եկեղեցու և հոգևորականության համար փակ տարածքի: Բազմաթիվ վանքեր, եկեղեցիներ ու մատուռներ կամ լիովին ոչնչացվեցին, կամ էլ վերածվեցին կրթական-մշակութային նշանակության շինությունների, պահեստների, անասնագոմերի և այլն: Առավել հայտնի կոթողները «աղվանականացնելու» և «ադրբեջանականացնելու» աճպարարություններով հայտարարվեցին «ադրբեջանական հուշարձաններ»[4]: 1920 թ. ավերակված Շուշիում այրված ու թալանված, բայց դեռևս կանգուն մնացած եկեղեցիները հետագա տարիներին աստճանաբար վերացան երկրի երեսից. իսպառ ոչնչացվեցին Ագուլեցվոց եկեղեցին ու Կուսանաց անապատը, Մեղրեցոց եկեղեցուց մնաց միայն խորանի հատվածը, որն ադրբեջանցիները վերածեցին բացօթյա կինոդիտումների բեմի: Պղծվեցին նաև հրաշքով կանգուն մնացած երկու եկեղեցիները. Ս. Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին ադրբեջանցիները հանքային ջրերի ըմպելասրահ էին դարձրել[5], իսկ հոյակերտ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ տաճարի պղծման վերջին եղանակն իբրև զինապահեստ ծառայեցնելն էր:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ 1920 թ. Շուշիի ցեղասպանությունը «սկիզբն էր երկանց», արյունոտ այն ելակետը, որով սկսվեց Ադրբեջանի կողմից

[1] Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան 2001, 759-766:
[2] Տես «Արարատ» 1914, 637:
[3] Տես Գարիկ սարկաւագ Ասրյան 2016, 97-110:
[4] Տես Տ. Ներսէս քահանայ Ասրեան 2017, 245-276:
[5] Տես Մկրտչյան, Դավթյան 2008, 30-32:

Արցախի թեմի քայքայման և վերացման բուն գործընթացը:

Ադրբեջանական բռնարարքների ավերիչ հետևանքները թոթափելու և Արցախում հոգևոր-եկեղեցական կյանքի վերականգնման հնարավորությունն ընձեռվեց միայն արցախյան ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ: 1989 թ. Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ վերաբացվեց Արցախի պատմական թեմը[1]: Իսկ 1992 թ. Շուշիի ազատագրումից հետո թեմակալ առաջնորդ Պարգև Սրբազանի տնօրինությամբ Արցախի թեմի առաջնորդարանը, 72 տարվա հարկադիր բացակայությունից հետո, վերահաստատվեց Շուշիում: 2019 թ. Արցախի թեմը տոնեց վերաբացման 30-ամյակը: Այդ 30 տարիները հոգևոր վերածննդի, կորուստների վերականգնման և նոր արժեքներ ստեղծելու[2] տարիներ են: Իհարկե, ինչպես քանիցս արդեն նշեցինք, կորուստների մի զգալի մասն անդառնալի է, դրա վերականգնումը, հասկանալի պատճառներով, անհնար է:

Ամփոփելով վերոնշյալը՝ փաստենք, որ Ադրբեջանի (լինի մուսավաթական, խորհրդային, թե հետխորհրդային) հետ թեկուզ համակեցության և արցախահայության ամենաբնական իրավունքների, անգամ կյանքի, սեփականության, հավատի և դավանանքի ազատության իրավունքների իրագործումն անհամատեղելի իրողություն է: Աստվածատուր այդ իրավունքների իրագործումը հնարավոր է բացառապես սեփական անկախ պետականության պայմաններում:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ա. Արխիվային վավերագրեր

Հայաստանի ազգային արխիվ, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, ֆ. 57, g. 5, գ. 216, թթ. 15-16:

Բ. Տպագիր վավերագրեր

Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան **2001,** Գիրք Թ, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), կազմեց եւ առաջաբանը գրեց Սանդրօ Բեհբուդեանը, Երեւան, «Ոսկան Երեւանցի» հրատարակչութիւն, 980 էջ:

Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920թթ. **2003,** Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Պատասխանատու խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան, Կազմողներ՝ Սոնյա Միրզոյան, Ալվարդ Ղազիյան, Երևան, «Լուսաս» ՍՊԸ տպարան, 523 էջ:

Գ. Մամուլ

«Արարատ» **1914**, Յուլիս, Ս. Էջմիածին:

«Նոր աշխատավոր» **1920**, 14 ապրիլի, Թիֆլիս:

«Մշակ» **1920**, 9 մայիսի, Թիֆլիս:

Դ. Հուշագրություն

Իշխանյան Ե. **1999,** Լեռնային Ղարաբաղ (1917-1920)**,** Երևան, «Հայաստան», 730 էջ:

[1] Տես Տ. Ներսէս քահանայ Ասրեան 2018, 509-528:

[2] Ամենավառ վկայությունը Ստեփանակերտի Ս. Աստվածամոր Հովանի փառահեղ մայր եկեղեցու կառուցումն է, որի օծման և բացման արարողությունը կատարվեց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ 2019 թ. ապրիլի 7-ին՝ Արցախի թեմի վերաբացման 30-ամյակի առիթով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Шагинян М. **1931**, Советское Закавказье, Очерки, 1922-1930, Москва, Государственное издательство художественной литературы “Ленинград”, 680 с.
2. Мелик-Шахназаров З. **1995**, Записки карабахского солдата (Воспоминания участника событий 1918-20 гг. в Нагорном Карабахе), Москва, 79 с.
3. Աբրահամյան Հ. **2003**, Մարտնչող Արցախը 1917-2000, Գիրք Ա, 1917-1923, Երևան, «Զանգակ-97», 340 էջ:
4. Աբրահամյան Հ. **2009**, Արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը և Արցախի թեմը (1901-1933), Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւն, 224 էջ:
5. Բալայան Մ. **2007,** Շուշիի վերածումը Ղարաբաղի հոգևոր կենտրոնի, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան», Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, էջ 70-78:
6. Մկրտչյան Շ., Դավթյան Շ. **2008,** Շուշի. ողբերգական ճակատագրի քաղաքը, Երևան, «Գասպրինտ», 242 էջ:
7. Մկրտչյան Հ. **2014,** Շուշիի կուսանաց անապատը, «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ», Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված գիտական կոնֆերանսի զեկուցումներ, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, էջ 204-213:
8. Գարիկ սարկավագ Ասրյան **2016**, Արցախի թեմը Խորհրդային Ադրբեջանի բռնաճնշումների կիզակետում 1920-1933 թթ., «21-րդ դար», Երևան, թիվ 5 (69), էջ 97-110:
9. Տ. Ներսէս քահանայ Ասրեան **2017**, Արցախի փակուած թեմի պատմութիւնից (1933-1988), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Հատոր ԼԷ., Պեյրութ, էջ 245-276:
10. Տ. Ներսէս քահանայ Ասրեան **2018,** Արցախի վերաբացուած թեմը Խորհրդային միութեան վերջին տարիներին (1988-1991), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Հատոր ԼԸ., Պեյրութ, էջ 509-528:

Ամփոփում

1920 թ. Շուշիի ցեղասպանության հետևանքով Արցախի թեմի կորուստները և հետագա ողբերգական ճակատագիրը

Տ. Ներսես քահանա Ասրյան

1920 թ. մարտին Ադրբեջանի կողմից Շուշիի հայության նկատմամբ իրականացված ցեղասպանության հետևանքով հսկայական կորուստներ ունեցավ նաև Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմը: Շուշին 1830-ական թվականներից Արցախի թեմի հոգևոր կենտրոնն էր, այստեղ էր կենտրոնացված ադմինիստրատիվ ռեսուրսը և հոգևոր-մշակութային ու նյութական ժառանգության զգալի մասը: Ադրբեջանցիների իրականացրած ցեղասպանության հետևանքով այդ ամենը բառացիորեն ոչնչացվեց: Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը և թեմական վարչության անդամների մեծամասնությունը դաժանաբար սպանվեցին: Եկեղեցական ամբողջ ունեցվածքը կողոպտվեց կամ հրկիզվեց:

Եկեղեցական ղեկավարությունից ու հոգևոր կենտրոնից զրկված Արցախի թեմը հայտնվեց խիստ խոցելի ու անպաշտպան իրավիճակում: Ադրբեջանական իշխանությունները հետևողականորեն մեծացրին բռնաճնշումները և 1933 թ. վերջնականապես փակեցին Արցախի թեմը: Մինչև 1988 թ. Արցախի տարածքում արգելված էր Հայ առաքելական եկեղեցու գործունեությունը:

Միայն արցախյան ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ հնարավոր եղավ Արցախում վերականգնել հոգևոր-եկեղեցական կյանքը և արցախահայության կրոնի ու դավանանքի ազատության իրավունքը:

Հիմնաբառեր. *Ադրբեջան, Շուշի, ցեղասպանություն, Արցախի թեմ, Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյան, կորուստներ, բռնաճնշումներ:*

Резюме

Потери Арцахской Епархии в результате геноцида в Шуши и ее дальнейшая трагическая участь

Отец Нерсес Асрян

В результате совершенного Азербайджаном геноцида армян в городе Шуши в марте 1920г. Арцахская епархия Армянской Апостольской Церкви тоже понесла колоссальные потери. Начиная с 1830-х гг. Шуши являлось духовным центром Арцахской епархии, где были сосредоточены административный ресурс и значительная часть духовно-культурного, а также материального наследия. Все это было буквально уничтожено в результате геноцида, совершенного азербайджанцами. Глава Арцахской епархии епископ Ваан Тер-Григорян и большинство членов епархиального управления были жестоко убиты. Все церковное имущество было разворовано или предано огню.

Лишенная церковного руководства и духовного центра, Арцахская епархия оказалась в крайне уязвимой и беззащитной ситуации. Азербайджанские власти последовательно усилили репрессии и в 1933 году окончательно ликвидировали Арцахскую епархию. До 1988г. деятельность Армянской Апостольской Церкви на территории Арцаха была запрещена.

Только благодаря Арцахской национально-освободительной борьбе стало возможным восстановить духовно-церковную жизнь и право армян Арцаха на свободу религии и вероисповедания.

Ключевые слова: *Азербайджан, Шуши, геноцид, Арцахская епархия, епископ Ваан Тер-Григорян, потери, репрессии.*

Abstract

Losses of the diocese of Artshakh as a result of Shoushi genocide of 1920 and further tragic fate

Father Nerses Asryan

The Artsakh Diocese of the Armenian Apostolic Church also suffered huge losses due to the genocide committed by Azerbaijan against the Armenians of Shushi in March 1920. Since 1830s Shushi had been the spiritual center of the Diocese of Artsakh, and the administrative resources, as well as the major part of the cultural, spiritual and material heritage were accumulated there. As a result of the genocide committed by the Azerbaijanis, all of this has been literally destroyed. Bishop Vahan Ter-Grigorian, the leader of the Diocese of Artsakh, and the majority of the Diocesan Board were brutally murdered. The whole Church property was stolen or burnt. Deprived of the Church leadership and spiritual center, the Diocese of Artsakh found itself in an extremely vulnerable and defenseless situation. The Azerbaijani authorities consistently intensified their repressions, and in 1933 they ultimately banned the Diocese of Artsakh. Until 1988, the activities of the Armenian Apostolic Church were banned in the territory of Artsakh.

Only thanks to the Artsakh national-liberation struggle it was possible to restore the spiritual-ecclesiastical life in Artsakh and the right of the Armenians of Artsakh to freedom of religion and belief.

Keywords: *Azerbaijan, Shushi, genocide, Diocese of Artsakh, Bishop Vahan Ter-Grigorian, losses, repressions.*